ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ

05.12.2023թ.

«Հայկազունք» ՍՊԸ տնօրեն Կ. Մացակյանին

# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
## Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Արագածոտնի մարզի ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Հայկազունք» ՍՊԸ միջև 07 օգոստսի 2023թ. կնքված N ԱՄԱՎՊՀԴ-ԳՀԱՊՁԲ-2023/07-01 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ. դեկտեմբերի 20-ը:

Սակայն պայմանագրով սահմանված ժամկետում ստանձնած պարտավորությունները չեն կատարվել ձեր կողմից, մասնավորապես՝ ս/թ. նոյեմբերի 24-ից հետո մատակարարումներ չեն իրականացվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1.7 կետը, 8.11 կետը՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և Հայկազունք» ՍՊԸ-ի միջև 07 օգոստոսի 2023թ. կնքված N ԱՄԱՎՊՀԴ-ԳՀԱՊՁԲ-2023/07-01 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան

հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Այսպիսով, «Հայկազունք» ՍՊԸ-ին տրվում է 10 /տասը/ օրացուցային օր՝ տուժանքներով սահմանված որակավորման՝ 100575 /մեկ հարյուր հազար հինգ հարյուր յոթանասունհինգ/ դրամ և պայմանագրի 67050 /վաթսունյոթ հազար հիսուն/ դրամ ապահովումների գումարները Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի Հ/Հ 900448000498 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, «Հայկազունք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Կապալառուի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Կապալառուի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ